

ՔՈՒԼՏՈՐԱԿԱՆ ՎԱՎԱՌԻ ԿՈՓ ՊՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴՐԱԳՐԵՐԸ՝ ՈՒՂՈՎԱԾ ՍԿՐՏԻՉ Ա. ԽՐԻՄՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ (1892–1907 ԹԹ.)¹

ՄՈՒՏՔ

Հոդվածը շարադրված է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանի՝ Ամենայն Հայոց 125-րդ կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմյանի (1892–1907) արխիվում ամփոփված վավերագրերի համապարփակ ուսումնասիրմամբ: Այս արխիվում կա շուրջ 8000 միավոր վավերագիր»: Դրանք Խրիմյան Հայրիկին հասցեագրված ձեռագիր խնդրագրեր են՝ թվագրված 1893–1907-ով:

Արխիվի ուսումնասիրությունը, վավերագրերի վերծանությունն ու առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելու գործը նախաձեռնել ենք դեռևս 2017 թվականից: Կատարված աշխատանքի արդյունքում առայժմ լույս է տեսել մեկ մենագրություն: Իրականացրել ենք Խրիմյանին ուղղված նամակներում նշված հասցեների քարտեզագրում՝ ըստ գավառների: Ընթացքում նախաձեռնել ենք հոդվածաշարք՝ նվիրված մեր քարտեզագրած առանձին գյուղերին: Դրա նպատակն այն է, որ Արեւմտյան Հայաստանի գյուղերի վերաբերյալ սկզբնաղբյուրային տվյալները խիստ սահմանափակ են եւ, ի տարբերություն դրանք ընդգրկող գավառների եւ նահանգների, չեն արժանացել առանձին խորքային ուսումնասիրության: Սույն հոդվածը մեր նախաձեռնած շարքի յոթներորդ հոդվածն է, որը ցանկացանք հրատարակել «էջմիածին» հանդեսում՝ այն նվիրելով Հայրիկի մահվան տարելիցին (1907 թ., հոկտեմբեր 29): Հոդվածի շրջանակում առանձնացրել ենք արխիվից քարտեզագրված Կոփ (Բուլանք) անունով բնակավայրից ստացված բոլոր խնդրագրերը, վերծանել, կատարել խնդրագրերի հեղինակների ցուցակագրում, հաշվառում՝ այս ձևով, շրջանառության մեջ դնելով նոր սկզբնաղբյուրներ եւ տեղեկություններ, նպաստելով ժողովրդագրական, տեղանվանագիտական, Հայոց

¹* Ստացվել է՝ 8.08.2025, գրախոսվել է՝ 9.09.2025: Էլ. հասցե՝ verasahakyan@gmail.com:

Եկեղեցու պատմության, ԺԹ. դարավերջի եւ Ի. դարասկզբի Արեւմտյան Հայաստանի գրավոր խոսքի եւ այլ բնագավառների վերաբերյալ հետազոտություններին:

Վերծանված խնդրագրերի շնորհիվ հնարավորություն ենք ստանում լսելու ցեղասպանության հետեւանքով անհետացած սերունդների «ձայները», որոնք բարբառախառն են կամ ոսկեղենիկ, լացակումած կամ ըմբոստ, տխուր, բայց եւ հուսալի:

ԽՐԻՄՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՐԽԻՎԻ ՄԱՍԻՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում է պահվում Ամենայն Հայոց 125-րդ Կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմյանի (1892–1907) արխիվի մի մասը՝ 17 թղթապանակ²: Սկզբնապես այս հավաքածուն պահպանվել է Սուրբ Էջմիածնում եւ, հետագայում՝ Կաթողիկոսական դիվանից առանձին, տեղափոխվել է Մաշտոցյան Մատենադարան: Ավելի քանի 8000 վավերագիր ընդգրկող այս բացառիկ հավաքածուն արժեքավոր նյութեր է պարունակում օսմանյան իշխանությունների իրականացրած հայահալած քաղաքականության, արեւմտահայության կացության, գաղթականության, վերաբնակեցման քաղաքականության, հայաբնակ բնակավայրերի եւ այլ բնագավառների վերաբերյալ տարաբնույթ հետազոտությունների համար:

Այս վավերագրերի ուսումնասիրման եւ հրատարակման առնչությամբ մեր աշխատանքային մեթոդաբանությունն այսպիսին է. առաջին հերթին ընդգծում եւ հենվում ենք նամակում նշված անձի հասցեին: Քարտեզագրելով այդ հասցեները՝ կառուցում ենք նախքան 1915 թվականը Օսմանյան գավառների հայաբնակ գյուղերի ցուցակները եւ տալիս նրանց տեղագրությունը: Ապա վերծանում ենք նամակը՝ պահպանելով արխիվային միավորների ընդօրինակման կանոնները, եւ կատարում տեղագրական, ժողովրդագրական քննություն³: Նամակների բովանդակու-

² Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ – Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսի ֆոնդ (այսուհետ՝ Խրիմյան կաթողիկոս), թղթապանակ՝ (այսուհետ՝ թղթ.) 101–117: Նախնական նկարագրության համար տես ՄՄ, արխիվային մատյան հմր 46Ա–46Բ:

³ Տես Վ. ՄԱՀԱԿԵԱՆ, Ժամանակագրություն Մշոյ Բուլանըք գաւառի Հատկոնք (Ատկոն) գիւղի՝ ըստ Օսմանեան տեղեկագրերի եւ հայկական աղբիւրների, Հասկ. Հայագիտական տարեգիրք, Նոր շրջան, ԺԴ. տարի, 2024–2025, Անթիլիաս–Լիբանան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 2025, էջ 505–531:

թյանը հենվելով՝ վերլուծում ենք այն ընկերային, քաղաքական պատկերը, որն առկա է եղել այդ ժամանակահատվածում տվյալ բնակավայրում:

Այս աշխատանքը կարելու է մի քանի առումներով. նախ ունենք Օսմանյան շրջանի վարչական կառուցվածքի, արխիվային տվյալների, ժողովրդագրությունների խիստ պակաս: Սա իր հերթին առաջ է բերում Արեւմտյան Հայաստանի հայաբնակ գյուղերի վերաբերյալ տարատեսակ անճշտություններ: Մեր իրականացրած աղբյուրագիտական վերլուծության արդյունքում ոչ միայն կարողացել ենք փոքր ինչ հստակեցնել հայաբնակ բնակավայրերի պատկերը այս կամ այն գավառում, այլեւ՝ ներկայացրել ենք նրանց տարբերակային ձեւերը, փոխանցել այդտեղ ապրած բնակիչների մասին որոշակի եւ ճշգրիտ տեղեկություններ: Ավելին, վավերագրերի վերծանության ընթացքում հայտնաբերվել են այնպիսի գյուղերից ստացված նամակներ, որոնք ըստ օտար աղբյուրների համարվել են բացառապես քրդաբնակ կամ չերքեզաբնակ⁴: Գտնվել են բնակավայրեր, որոնք ցուցակներում առհասարակ հանդիպում են առաջին անգամ⁵: Հետեւաբար՝ տվյալ պարագայում այդ վավերագրերը դառնում են միանգամայն բացառիկ սկզբնաղբյուրներ:

Անշուշտ, մեր հետազոտություններում չենք սահմանափակել միայն արխիվային այս նորահայտ փաստաթղթերով: Օգտագործել ենք նաեւ օսմանյան շրջանի նորահայտ տեղեկագրեր, վիճակացույցներ, մամուլի հրապարակումներ, օսմաներեն փաստաթղթեր, հետազոտություններ եւ այլն:

Նամակների լեզուն հարուստ է, գեղեցիկ, փոխանցած տեղեկությունը՝ եզակի եւ հավաստի: Այս ամենը վկայում է Մկրտիչ Ա. Խրիմեանի արխիվում տեղ գտած վավերագրերի պատմագիտական, ցեղասպանագիտական, լեզվաբանական, ազգագրական արժեքի մասին՝ այն դարձնելով բազմաճյուղ ուսումնասիրությունների համար առանցքային սկզբնաղբյուրներով հարուստ հավաքածու:

Ահա այդ նամակներից մի քանի օրինակ.

⁴ V. SAHAKYAN, *Written Sources and Demographic Insights into the Village of Abri*, *Studies in Oriental Sources*, vol. VI, National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Oriental Studies, Yerevan, 2025 (գտնվում է հրատարակման փուլում):

⁵ Վ. ՍԱՀԱԿՅԱՆ, *Մշոյ Բուլանըք գաւառի հայաբնակ գիւղերն ըստ Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակների, Երեւան, Մատենադարան, 2021, էջ 162:*

Նորին Վեհափառ Տ[եառն] Տ[եառն]⁶
Մկրտիչ Սրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց
Աղերս խոնարհաբար առ Վեհութիւնդ

Պաշտելի՛ Հայր,

Ես՝ ստորագրեալս, Բուլանուղ գաՎառի Կոբ գիւղացի՝ Պօղոս Աթա-
մեանս, կ'դիմիմ երկտողովս Ձերին գթոտ Հայրութեանդ եւ աղերսանօք
կը համբուրիմ Հայրապ(ե)տական աջդ՝ ծանուցանելով իմ վիրաւորեալ
անձիս դրութիւնը:

Բարերար՛ Տէր, այս քանի օր է, որ երկտողով մը յայտնեցինք մեր վի-
ճակը, թէ գէրիացեալս վիրավոր եւ անտէրունջ՝ կամ Վաղարշապատի
տանն՝ Յակոբ Աղաջանեանի, որ իր մարդասիրութեամբ կ'պաշտպանէ
ինձ՝ տկարիս:

Ա[ստուա]ծ իր երկնային փառաց արժանացնէ, ինչպէս նա <յ> կսփո-
փէ եւ կ'մխիթարէ իմ վիրավոր վշտերս՝ իմ այն ահուկի դրութեանս:

Օ՛վ գթառատ Հայր, կաղաչիմ, ողորմե անարժանիս՝ ի սէր ամէնակարօ-
ղի, որ եւ փոքր ինչ օգնութիւնով մը կառավարիլ վերոյիշեալ մարդու տան:

Պաշտելի՛ Հայր, ոտս այս մի ամիս է մի վերք է բացվեր, եւ կտանջվիմ
չարաչար: Վեհութեանդ զոհ լինիմ՝ հաճիր ինձ՝ վիրավորիս բժշկին տալ,
հայրական Հայր, գուցէ դարմանե եւ լավանայ իմ վերքս, եւ ես՝ անար-
ժանս, մնամ բարէմաղթ նպատակիդ:

Վեհափառ Տէր, կաղաչիմ՝ հրամայէք բժշկին, որ գայ այս տեղ՝ ոտս
դարմանե, քանի որ չիմ կարօղ քալիլ եւ գալ բժշկին:

Կ'մնամ Ձեր խնամաց կարօտ:

Մնամ Ձեր կեանց բարէմաղթօղ՝ Պօղոս Աթամեանս՝ վիրավոր կոփեցի
1901 թ[իւ], Դեկտեմբեր 28-ին

ի Վաղարշապատ⁷

⁶ Վավերագրերը վերծանելիս եւ արտագրելիս պատվո նշանները վերականգնել ենք ու-
ղիղ [] փակագծերի մեջ, տառասխալները շղագրով ընդգծել ենք: Բաց թողնված տառերը
վերցրել ենք կլոր () փակածերի մեջ: Ավելորդ տառերը վերցրել ենք սուր < > փակագծերի
մեջ: Այն բառերը, որոնց ընթերցման հարցում վստահ չենք եղել ընդգծել ենք փակագծերում
առկա հարցական նշանով (?):

⁷ ՄՄ, Խրիմյան կաթողիկոսի, թղթ. 111, վավերագիր (այսուհետ՝ վավ.) 357:

* * *

Նորին Վեհափառութեան Տ[եա]ռն Տ[եա]ռն Մկրտիչ Ս[ր]բազնագոյն
Կաթողիկոս Ամ[ենայն] Հայոց

Պուլանըխու գաւառի Կոպ⁸ գիւղի բնակիչ Հայրապետ Միքայէլեանցէ

Խոնարհական խնդիր

Պաշտելի՛ Հայրիկ,

Ութս(ու)ն տարեկան ծերուկս երբէք չըտեսնուած ցաւալի դէպքերը տեսանք: Կարճն ասելով՝ մենք այժմ աշխարհիս ամենայետին չքաւորներէն ստոր եմք, վ[ա]սնզի բան մը չունինք: Մեր հարստութիւն] մեր վրայինն է, որ կը տեսնէք, զի քրդական համիդեայ ըսուած զօրքը, որ բոլոր ունեցածնիս սրբեցին տարին...

Ինչ երկարեմ, մեր գիւղը, որ առաջ 12 հօտ ոչխար դուրս կէլլէր, նմանապէս պճղնաւոր սեւատաւար, այսօր մի այծ չէ մնացեր: Ինչ ասեմ, այն բոլոր մեր բժաբեր⁹ աչքեր տեսաւ եւ համբերեցիմք:

Վե՛հ Տէր, շեմք համարձակուիր մեր բոլոր դժբախտութեանց ծրարը բանալ եւ գրգռել մի առ մի, գուցէ ցաւ՝ ի վ[ե]ր[այ] ցաւոց դեզ մը լսողաց որդին...

Այսքան միայն կասեմք, որ այս բոլորը տեսնելով, չը կարողացանք համբերել յետագայ վտանգին. այս կողմը ապաստնեցանք: Բայց, ի՞նչ օգուտ, որ մեր՝ այնտեղ մնացած 10 գերիներու լալահառաջ ձայն մեզ կը կանչէ:

Ուրեմն, վե՛հ Հայրիկ, այս մեր ցաւոց դեզ ոչ ոք չէ կարող պարգեւել, բացի Ձերին Վեհափառութիւն: Ուրեմն, արձակեցէ՛ք մեզ, որ թոթիղում¹⁰ գնամք այս ձայնին հետ...

Ամենախոնարհ ակնած[ութեամ]բ մատչիմ համբոյր որդիական՝

Ն[ուաստ] ծ[առայ] Հայրապետ Միքայէլեան

1895, 15 Օգոստոս

Ի վ[ա]ղ[ա]րը[ա]պ[ա]տ¹¹

⁸ Կոբ (Կոփ, Կոպ, Kob, Korp, Gop): Գլուղի մասին այլ մանրամասներ տե՛ս Վ. ՍԱՀԱԿՅԱՆ, 2021, էջ 167–178:

⁹ Բիժ – յուղային դեղնորակ հյութ. ճիւղ, ճպուռ:

¹⁰ Թողեմք, թողնենք:

¹¹ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 111:

ԿՈՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ, ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ
ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿԱԳՐԵՐՈՒՄ

Կոփ տեղանվան ծագման վերաբերյալ պահպանվել է մի ավանդազրույց. Դանիել Ասորու թողած կտակի համաձայն՝ պետք է նրան ամփոփեին իր ճգնատեղիում: Երբ սալյով տեղափոխում են քորեպիսկոպոսի մարմինը սալի «կոփ» կոչված փայտե մասը կտտրվում է: Ըստ ավանդույթի վայրն այդուհետ կոչվել է Կոփ, որը Ցուլ լեռան ստորոտում է՝ Հացյաց Դրախտ կոչվող տեղում¹²: Հետագայում այստեղ հիմնվում է Սուրբ Դանիել վանքը, որը հայտնի է նաև Կոփավանք, Կարմիր վանք կամ Կարմրո վանք անուններով: Թեև կառուցման հստակ թվական հայտնի չէ, ենթադրվում է, որ այն Դ. դարի կառույց պետք է լինի¹³: Այս վանքում է ամփոփված Դանիել եպիսկոպոսի մարմինը¹⁴: Սբ Դանիելի վանքն ունեցել է ընդարձակ կալվածքներ եւ մեկ մագաղաթյա Ավետարան¹⁵:

Իր տեղագրությամբ Կոփը համապատասխանում է Մանկան գոմ կամ Մանկագոմ հին հայկական բնակավայրին: Այն հիշատակված է նաև ԺԶ. դարում կազմված Օսմանյան տեղեկագրերում, որպես 13 տուն հայ (Cemâ'at-ı Erâmine, Neferan 13) եւ 8 տուն իսլամ բնակչություն ունեցող գյուղ¹⁶:

Որոշ աղբյուրներում Կոփը նշվում է որպես քաղաք, որոշներում՝ գյուղ, գյուղաքաղաք եւ ավան: Հ. Լինչը այն համարում է ավելի շատ գյուղ, քան՝ քաղաք: Մանուել Միրախորյանը՝ գյուղաքաղաք կամ մայր գյուղ¹⁷:

¹² ԲԵՆՍԷ (ՍԱՀԱԿ ՄՈՎՍԻՍԵԱՆ), Բուլանըխ կամ Հարք գաւառ. Պատմական տեսութիւն, Ազգագրական հանդէս, Պատկերագարդ, շորորդ տարի, Ե. գիրք, հմր 1, Թիֆլիս, 1899, 5–185, էջ 26–27:

¹³ Չորրորդ դարու Հայ եկեղեցին (Արտատպած «Լումալ» հանդիսից), Թիֆլիս, 1901, էջ 33; Տէն նաև ՄՇՈՑ ԳԵՂԱՄ (ԳԵՂԱՄ ՏԷՐ-ՎԱՐԱՊԵՏԵԱՆ), Տարօնի վանքերը. ուղեւորի յիշատակներ, Երեւան, 2003, էջ 91; Հայր ՆԵՐՍԷՍ ՍԱՐԳՍԵԱՆ, Տեղագրութիւնը ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 223:

¹⁴ Հ. ՆԵՐՍԵՍ ՍԱՐԳՍԵԱՆ, Տեղագրութիւն ի Փոքր եւ ի Մեծ Հայս, էջ 223:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 432, թ. 5բ շրջ. – 10: Մի խումբ ակնանատեսների վկայությունները Մուշի գավառի Բուլանըխի գավառակի Կոփ գյուղի կոտորածների մասին: Վավերագրի ամբողջական վերծանությունը տես Ա. ՎԻՐԱԲՅԱՆ, Գ. ԱՎԱԳՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ. 2, էջ 176–179:

¹⁶ A. ÖZKILIÇ, A. COŞKUN, A. SIVRIDAĞ, AND M. YÜZBAŞIOĞLU, eds., 294 Numaralı Himis Livâsı Mufassal Tahrîr Defteri (963/1556), Defteri Hâkânî Dizisi: VI (Ankara, 2000), էջ 77:

¹⁷ Մ. ՄԻՐԱՅՈՐԵԱՆ, Նկարագրական Ուղեւորութիւն ի Հայաբնակ Գաւառս Արեւելեան Տաճկաստանի, Տեղագրութիւնը Սարէն եւ Չորէն, Հնէն եւ Նորէն Պիտանի Գիտնոց, մասն Գ.,

Բնակավայրը տարբեր աղբյուրներում (դասական եւ նոր ուղղագրություններով) հանդիպում է Կոփ, Կոպ, Կօպ, Կօբ, Կոբ, Պուլանուխ¹⁸, Բուլանուխ, Բուլանլուխ եւ այլ անուններով: Այն ընկած է Մուշից 78 կմ հյուսիսարեւելք, Բլեջան լեռան հյուսիսարեւելյան մասում, Կոր-Ջուր գետի ձախ ասփին (39°05'45"N 42°16'01"E)¹⁹:

1869 թվականից Կոփը դարձել է Բուլանըք գավառի վարչական կենտրոնը: Այստեղ էր ֆայմաֆամի²⁰ նստավայրը, դատարանը, հեռագրատունը եւ Մշո առաջնորդության նստավայրը: Բնակավայրը մշտապես ունեցել է խիտ հայկական բնակչություն: Սա տեսանելի է նաեւ տեղի դպրոցների եւ գրադարանների առատությունից: Այստեղ գործել է Կոփա վանքի գիշերօթիկ դպրոցը²¹, «Միացեալ ընկերութեան» գյուղական նախակրթարանը (1879 թ.)²², 1871 թվականին Գարեգին վրդ. Սրվանձտյանցի ջանքերով բացված 55 աշակերտ ունեցող դպրոցը²³, 1908–1910 թթ. «Ազգանվեր Հայուհյաց» ընկերության Աղջկանց վարժարանը:

Միրախորյանը Կոփում նշում է երեք եկեղեցի՝ Սբ. Աստվածածին, Սբ. Թուխ Մանուկ եւ Սբ. Գեորգ²⁴: Բենսեն եկեղեցիները անվանում է Սբ. Աստվածածին, Սբ. Թուխ Մանուկ եւ Սբ. Ստեփաննոս²⁵:

Պոլիս, 1885, էջ 69:

¹⁸ Հ. ՆԵՐՍԷՍ ՍԱՐԳՍԵԱՆ, Տեղագրութիւն ի Փոքր եւ ի Մեծ Հայս, էջ 223:

¹⁹ Տես Google Earth:

²⁰ Քայմաքամ – (թուրք.՝ kaymakam, արմատը՝ արաբ. qā'im bi-l-maqām: Տարբեր դարաշրջաններում եւ տարբեր աշխարհագրություններում այն ունեցել է տարբեր իմաստ, գործառութիւն եւ նշանակություն: Այստեղ գործածվել է որպէս նահիբի (գյուղախումբ) կառավարիչ:

²¹ Ա. ՏԵՒԿԱՆՅ, Այցելութիւն ի Հայաստան, ձեռագիրը պատրաստել եւ ծանոթագրել է Հ. Մ. Պողոսյանը, Երեւան, 1985, էջ 80:

²² Այն ունեցել է 20 աշակերտ եւ երկու ուսուցիչ: Նախակրթարանը փակվել է 1882 թվականին: Տես Կ. ՍԱՍՈՒՆԻ, Պատմութիւն Տարօնի Աշխարհի: Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, Հայկական ցեղասպանութեան 100-ամեակ, Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ Յուշամատեններ, 2013, (2), էջ 252:

²³ 1915 թվականի տվյալներով աշակերտների թիվը հասնում էր 120-ի: Տես ՀԱՍ, ֆ. 227, ց. 1, գ. 432, թ. 5բ շրջ. – 10: Մի խումբ ականատեսների վկայությունները Մուշի գավառի Բուլանըքի գավառակի Կոփ գյուղի կոտորածների մասին: Վավերագրի ամբողջական վերծանությունը տես Ա. ՎԻՐԱԲՅԱՆ, Գ. ԱՎԱԳՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ. 2, էջ 176–179:

²⁴ Մ. ՄԻՐԱՆՈՐԵԱՆ, Նկարագրական Ուղեւորութիւն, մասն Գ., Պոլիս, 1885, էջ 70:

²⁵ ԲԵՆՍԷ, Բուլանըք կամ Հարք գաւառ. էջ 26: Այս անուններն են հիշված նաեւ մի խումբ վերապրողների վկայություններում, տես ՀԱՍ, ֆ. 227, ց. 1, գ. 432, թ. 5բ շրջ. – 10: Մի խումբ ականատեսների վկայությունները Մուշի գավառի Բուլանըքի գավառակի Կոփ գյուղի կոտորածների մասին: Վավերագրի ամբողջական վերծանությունը տես Ա. ՎԻՐԱԲՅԱՆ, Գ. ԱՎԱԳՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ. 2, էջ 176–179:

1884–1915 թվականների տարբեր հաշվարկների, վիճակագրությունների եւ վկայությունների համաձայն գյուղի հայ բնակչությունը կազմել է նվազագույնը 300–350²⁶, առավելագույնը՝ 800²⁷ տուն հայ: Ռ. Թաթոյանի հաշվարկների համաձայն 523 տուն կամ 5171 հայ²⁸: 1896 թվականին գրված խնդրագրերից մեկում Նրիմյանին է դիմել Կոփի տանուտեր՝ Հովհաննես Թովմասյանցը: Վերջինս նշում է, որ ինքը 500 տուն հայ բնակչություն ունեցող գյուղի տանուտեր է²⁹: Այս վկայությունը մենք հիմնավոր ենք համարում եւ ընդունում, որ Կոփը նախքան Հայոց ցեղասպանությունը ունեցել է մոտավորապես 500 տուն հայ:

Համիդիե գնդերի օժանդակությամբ եւ քրդական հրոսակախմբերի մասնակցությամբ Կոփում կազմակերպված համիդյան կոտորածները ամենադաժանն էին: 1895 թ. հոկտեմբերի 1-ից 13-ը Օսմանյան կառավարությունը Կոփի դպրոցում ծխախեղդ անելու եղանակով սպանել է մեծ թվով հոգեւորականների եւ 5–12 տարեկան մի խումբ դպրոցականների: Այս վայրագություններին հաջորդել է քաղաքի հայ բնակչության բռնի իսլամացումը: 1915 թ. Կոփը ենթարկվել է ցեղասպանության³⁰: Ներկայումս պատմական Կոփն ամբողջությամբ հայաթափ է: Թուրքական աղբյուրներում նշվում է Բուլանք անունով, մինչդեռ քրդական աղբյուրներում բնակավայրերը բացառապես նշվում են իրենց հին անուններով³¹: 1916 թվականի, Ցեղասպանությունը վերապրած կոփեցիների վկայությունների համաձայն՝ նրանք բնակություն են հաստատել Ալեքսանդրա-

²⁶ Տէս В. МАЕВСКИЙ, Военно-статистическое описание Ванского и Битлисского вилайетов (Тифлис: Типография штаба Кавказского военного округа, 1904), էջ 119:

²⁷ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 452, թ. 5 շրջ. – 7 շրջ., Վերապրած նազարեթ Ղալաջյանի վկայությունը Մուշի գավառի Բուլանքի գավառակի Կոփ գյուղի կոտորածների մասին: Վավերագրի ամբողջական վերծանությունը տես Ա. ՎԻՐԱՔՅԱՆ, Գ. ԱՎԱԳՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ. 2, էջ 180–182:

²⁸ Ռ. ԹԱԹՈՅԱՆ, Արեւմտեան Հայաստանի Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան թիւը Մեծ եղեռնի նախօրեակին, Հ.Բ.Ը.Մ., 2022, էջ 134:

²⁹ Բնագիրը տես ՄՄ, Նրիմյան կաթողիկոս, թղթ. 104, վավ. 57: Ամբողջական վերծանությունը տես Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, 2021, էջ 174:

³⁰ Տէս P. CHARMETANT, Ermeni Katliamları Raporu, 1894–1895, İstanbul’da Görevli Altı Büyükelçiliğin Ortak Hazırladığı Statistik, İstanbul, Peri yayınları, 2012, էջ 84–85: Այլ մանրամասներ տես ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 432, թ. 5բ շրջ. – 10: Մի խումբ ականատեսների վկայությունները Մուշի գավառի Բուլանքի գավառակի Կոփ գյուղի կոտորածների մասին: Վավերագրի ամբողջական վերծանությունը տես Ա. ՎԻՐԱՔՅԱՆ, Գ. ԱՎԱԳՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ. 2, էջ 176–179:

³¹ “Bajar û gundên Kopê (Կոփ քաղաքը եւ գյուղերը)”, Wikîpediya Kurdî, [https://ku.wikipedia.org/wiki/Gebolan \(վերջին մուտք՝ 27 հոկտեմբերի, 2025\)](https://ku.wikipedia.org/wiki/Gebolan_(վերջին_մուտք_27_հոկտեմբերի,_2025)):

պողում, Շորագյալում, Մեծ Ղարաքիլիսայում, Ապարանում, իսկ որոշ մաս հաստատվել է Կարսում եւ Թիֆլիսում³²:

ՀԱՅ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԿՐՏԻԶ ԽՐԻՄՅԱՆԻՆ

ՈՒՂՂՎԱԾ ԽՆԴՐԱԳՐԵՐԻ

Խրիմյան կաթողիկոսի ֆոնդի ուսումնասիրության արդյունքում մենք գտել ենք 30 վավերագիր, որոնց հեղինակները ծնունդով կոփեցի են: Բոլորի դիմումներում Խրիմյան կաթողիկոսից օգնության, աջակցության խնդրանքն է: Մենք ցուցակագրել ենք այդ խնդրագրերի հեղինակներին, առանձնացրել ներկայացրած վավերագրերում շնչերի քանակը: Ըստ այդմ ստացել ենք հետևյալ պատկերը. խնդրագրեր են գրել դպիր Պետրոս Անտոնյանը (Ալոյանց)³³, Եղո Խլղաթյանը³⁴, Սիմոն Վարդանյանը (11 շունչ, որից չորսը՝ մահացել են սովից)³⁵, Մհեր Ավետիսյանցը (5 շունչ)³⁶, Մխիթար Հարությունյանը (7 շունչ)³⁷, Խուրաթ Մարտիրոսյան-Սիմոնյանցը³⁸, Կոփի տանուտեր (ռես/տանուտեր) Հովհաննես Թովմասյանցը (30 շունչ գերդաստան)³⁹, Սարգիս Մարտիրոսյանը (10 շունչ)⁴⁰, Կոփի մյուս տանուտեր (ռես) Գրիգոր Ղազարյանցը (6 ընկերների անունից)⁴¹, Մարգար Բարոյանցը, Գասպար Բարոյանցը, Հարություն Բարոյանցը, Կիրակոս Բարոյանցը (եւս մեկ կին, որի անունը նշված չէ)⁴², Մխիթար (Մխե) Մուրադյանը⁴³, Գասպար Խաչատուրյանցը եւ հորեղբայրը (7 շունչ)⁴⁴, Ռաշո Ասլոյանը⁴⁵, Պողոս

³² ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 432, թ. 5բ շրջ. – 10: Մի խումբ ակնատեսների վկայությունները Մուշի գավառի Բուլանըխի գավառակի Կոփ գյուղի կոտորածների մասին: Վավերագրի ամբողջական վերծանությունը տես Ա. ՎԵՐԱԲՅԱՆ, Գ. ԱՎԱԳՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ. 2, էջ 176–179:

³³ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 1:

³⁴ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 40:

³⁵ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 41:

³⁶ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 108:

³⁷ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 104, վավ. 82:

³⁸ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 104, վավ. 104:

³⁹ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 104, վավ. 57:

⁴⁰ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 22:

⁴¹ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 104, վավ. 39:

⁴² ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 102, վավ. 769:

⁴³ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 105, վավ. 326:

⁴⁴ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 109, վավ. 5:

⁴⁵ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 109, վավ. 299:

Ադամյանը⁴⁶, Գրիգոր Տոնոյանը (3 շունչ)⁴⁷, Արշակ Անտոնյանը⁴⁸, Նազար Սաղաթեյանը⁴⁹, Մհեր Ավետիսյանցը⁵⁰, Մանուկ Մուրադյանցը (7 շունչ)⁵¹, Հայրապետ Միքայելյան(ց)ը (11 շունչ)⁵², Մուշեղ Ավագյանը⁵³, Առաքել Սարգիսյանը⁵⁴, Տիգրան Ավագյանը⁵⁵, Խաթուն Գրիգորյանը եւ ամուսինը՝ Մարգար Աստվածատրյանցը⁵⁶, Պողոս Ադամյանը⁵⁷, Խչո Ավետիսյանը⁵⁸ (Խչոն եւ Կ. Հակոբյանը ամուսիններ են, ունեն 5 երեխա, ընդ.՝ 7 շունչ)⁵⁹, դպիր Պետրոս Անտոնյան-Ալոյանցը (ծառայել է Կոփի Ս. Դանիել վանքում)⁶⁰, Մովսես Մկրտչյանը⁶¹, Մանուկ Մարկոսյանը⁶², Ասլան Մանուկյանը (9 շունչ), Ավետիս Բաղդասարյանը (3 շունչ), Նազար Սաղաթեյանը⁶³, Տեր Մատթեոս քահանա Տեր Գեւորգյանը⁶⁴:

Ունենք եւս 7 ընտանիքի մասին տեղեկություն, որտեղ սակայն նշված չէ, թե որ ընտանիքն է Բուլանըքից եւ որը՝ Ալաշկերտից: Այդ ընտանիքների ավագներն են՝ Մխո Կարապետյանը (7 շունչ)⁶⁵, Դիլբար Կիրակոսյանը (6 շունչ)⁶⁶, Պողոս Հարոյանը (8 շունչ)⁶⁷, Մարտիրոս Հարությունյանը (7 շունչ)⁶⁸, Կոլե Սահակյանը (5 շունչ)⁶⁹, Տիգրան Մարգարյանը

⁴⁶ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 108:
⁴⁷ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 115, վավ. 61: ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 116, վավ. 351: Գրիգոր Տոնոյանը Մատթեոս վարդապետի եղբոր որդին է:
⁴⁸ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 116, վավ. 350:
⁴⁹ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 102, վավ. 617:
⁵⁰ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 108:
⁵¹ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 110:
⁵² ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 111:
⁵³ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 115, վավ. 57: Նամակը գրվել է 3 տուն կոփեցիների անունից:
⁵⁴ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 116, վավ. 585:
⁵⁵ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 116, վավ. 585:
⁵⁶ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 113:
⁵⁷ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 111, վավ. 354: ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 111, վավ. 354: ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 111, վավ. 357:
⁵⁸ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 115:
⁵⁹ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 115:
⁶⁰ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 1:
⁶¹ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 299:
⁶² ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 334:
⁶³ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 102, վավ. 617:
⁶⁴ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 102, վավ. 644:
⁶⁵ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 243:
⁶⁶ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 243:
⁶⁷ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 243:
⁶⁸ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 243:
⁶⁹ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 243:

(2 շունչ)⁷⁰, Նուբար Վարդանյանը (6 շունչ)⁷¹, Մովսես Մկրտչյանը⁷², Մանուկ Մարկոսյանը⁷³, Վարդան Սիմոնյանը⁷⁴, Պողոս Ադամյանը, Մուշեղ Ավագյանը (4 շունչ), Գրիգոր Տոնոյանը, Առաքել Սարգսյանը:

Ունենք այսպիսի երկրորդ նամակը եւս, որտեղ նույնպես գյուղերը նշված չեն:

Նորին Վեհափառութեան Ծայրագոյն Պատրիարքի եւ ժառանգի Առաքելական Մայր Աթոռոյ Ս[ր]բ[ոյ] էջմիածնի Տ[եառն] Մկրտչի

Տաճկաստանի հինգ նահանգաց տասն տնուոր գաղթական ընտանեացմէ

այն է՝ Մուշ, Պուլանըխ, Ալաշկերտ, Կլաթ⁷⁵ եւ Խնուս

1. Մարտիրոս Մուրադե[ա]ն – 5 հոգի
2. Յակոբ Սահակեան – 8 հոգի
3. Գրիգոր Ներսէսե[ա]ն – 9 հոգի
4. Եղիազար Մխիթ[ա]րե[ա]ն – 4 հոգի
5. Գէորք Լեւոնեան – 8 հոգի
6. Յակոբ Մարգարե[ա]ն – 4 հոգի
7. Ասպատուր Կիրակոսե[ա]ն – 6 հոգի
8. Խաչօ Կազրե[ա]ն – 6 հոգի
9. Յոհաննէս Սարգիսե[ա]ն – 6 հոգի
10. Մովսէս Պաղտասարե[ա]ն – 5 հոգի

Ընդհանուր 57 հոգի

Ամենախոնարհ Խնդիր

Վեհափառ եւ մեր պաշտելի Հայրապետ,

Մենք, այսպ[է]ս միահամուռ դիմած ենք առ ոտս Վեհափառութեանդ՝ ոչ թէ մեր ցաւերը յայտնելու, ոչ թէ մեր անցեալ եւ ներկայն ողբալու:

⁷⁰ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 243:

⁷¹ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 243:

⁷² ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 299:

⁷³ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 334:

⁷⁴ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 377:

⁷⁵ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 111, վավ. 354:

⁷⁶ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 115, վավ. 057:

⁷⁷ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 116, վավ. 351:

⁷⁷ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 116, վավ. 585:

⁷⁵ Խլաթ:

դարձած ընտանեաց մօտ, մինչեւ գարուն տեսնենք Հայաստանի Աստուածը ինչ կը տնօրինէ:

Համբուրի Ս[ր]բաբաշխ աջոյդ Տ[եառն] Վեհուք[եան],

Մնամք անարժան որդի՝ Մ[ա]րտիրոս Յակոբ[եան] եւ ընկերք:

1895, 30 Հոկ[տեմբերի]

‘Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ’⁷⁷

Կոփ բնակավայրի հայ բնակչուկայան մասին տեղեկություններ ենք քաղել նաեւ Թիֆլիսում լույս տեսնող «Համբաւաբեր» թերթի հավելված բաժնից, որը բաղկացած լինելով 4 էջից, ընդգրկում է մինչեւ 18 տարեկան այն որբերի մասին տեղեկություններ, որոնք փրկվել էին եւ ապաստան գտել ցարական Ռուսաստանի տարբեր որբանոցներում: Քանի որ մեր հոդվածն ըստ էության ներկայացնում է Կոփի հայ բնակչուկայան ժողովրդագրությունը, ուստի առանձնացրել ենք այն որբերին, որոնք ընդգրկված են եղել այս որբանոցներում: Այդ որբերն են՝ Լուսիկ Մեհրեյան՝ 6 տարեկան, Տելբեր (Դիլբար)՝ Հովհաննիսյան՝ 10 տարեկան, Զաքար Թորոսյան՝ 13 տարեկան, Մանուկ Տոնոյան՝ 14 տարեկան, Հղաթ Իգիթյան՝ 15 տարեկան, Արտավազ Թարգիմուրադյան՝ 7 տարեկան, Աբրահամ Հովսեփյան՝ 12 տարեկան, Ազնիվ Հակոբյան՝ 4 տարեկան, Նվարդ Մարգարյան՝ 10 տարեկան, Սամվել՝ 6 տարեկան, Բերսաբ Ավետիսյան՝ 8 տարեկան, Ալեքսան Աստոյան՝ 9 տարեկան, Ֆինչո Բարսեղյան՝ 3 տարեկան, Մկրտիչ Զաքարյան՝ 10 տարեկան, Ալեքսան Զաքարյան՝ 8 տարեկան, Սաթենիկ Զաքարյան՝ 8 տարեկան, Գյուլնազ Կարապետյան՝ 7 տարեկան, Զիզո Կարապետյան՝ 14 տարեկան, Նվարդ Կարապետյան՝ 12 տարեկան, Զարզանդ Կարապետյան՝ 6 տարեկան, Վիրսան Կարապետյան՝ 11 տարեկան, Ալմաստ Նազարյան՝ 12 տարեկան, Ռուբեն Նազարյան՝ 11 տարեկան, Ասատուր Սերոբյան՝ 11 տարեկան, Սանդուխտ Գասպարյան՝ 11 տարեկան, Ռեհան Մխիթարյան՝ 10 տարեկան, Սաթենիկ Բարբարյան՝ 11 տարեկան, Գրիգոր՝ 14 տարեկան, Հայկ Ազարյան՝ 8 տարեկան, Վարդան Պետրոսյան՝ 13 տարեկան, Սիրարփի՝ 8 տարեկան, Սայրո՝ 9 տարեկան, Վարդանուշ Արսենյան՝ 5 տարեկան, Աստվածատուր Մանուկյան՝ 12 տարեկան, Համազասպ Հարությունյան՝ 9 տարեկան, Գարեգին Հարությունյան՝ 5 տարեկան, Սաթենիկ Բարբարյան (կամ Բերբերյան)՝ 11 տարեկան, Հայկանուշ Բարբարյան (կամ Բերբերյան)՝ 9 տարեկան,

⁷⁷ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 103, վավ. 342:

Հակոբ Մարտիրոսյան՝ 7 տարեկան, Սուվար Ջաքարյան՝ 6 տարեկան, Եղո Ջաքարյան՝ 10 տարեկան, Վահան Մարտոսյան՝ 10 տարեկան, Առաքել Հովհաննիսյան՝ 5 տարեկան, Սարգիս Կարապետյան՝ 10 տարեկան, Փարիշան Հարուսթյունյան՝ 11 տարեկան, Սուսեր Հովհաննիսյան՝ 7 տարեկան, Առաքել Հովհաննիսյան՝ 3 տարեկան, Սարգիս Մկրտչյան՝ 13 տարեկան⁷⁸:

Հոգվածի շրջանակում Կոփում ծնված նշանավոր հայորդիներից սույն հոգվածի մեջ ընդգրկել ենք Ջաքարիա Կոփեցուն, որը 1840–1846 թվականներին Երուսաղեմի պատրիարքն էր, բանաստեղծ եւ արձակագիր Սողոմոն Տարոնցուն (Մովսիսյան 1904–1971 թթ.), արձակագիրներ Քրիստափոր Թափալցյանին (1910–1967), Ջարգանդ Դարյանին (Մովսիսյան 1912–1984 թթ.):

Նախքան 1915 թվականը Կոփում ծնված, Ցեղասպանությունը վերապրած անձանց մասին տեղեկություններն ամբողջացրել ենք Հայաստանի ազգային արխիվի նյութերից: Ըստ այս վավերագրերի Կոփում են ծնվել Մարգար Գասպարյանը, Գրիգոր Պետրոսյանը, Կոբեցի Մարգարը, Կոբեցի Մուշեղը, Միհրան Գրիգորյանը⁷⁹, Մուշեղ Մանուկյանը, Միսակ Մխիթարյանը, Քերովբե Առաքելյանը⁸⁰, Մխիթար էֆենդին⁸¹, Մարգար Քոստյանը, Գասպար Սահակյանցը, Տիգրան Խաչատուրյանը, Մանուկ Հակոբյանը,

⁷⁸ «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հավելված (այսուհետ՝ հվ.) հմր 3, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 4, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 5, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 6, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 7, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 9, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 10, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 14, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 15, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 19, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 20, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 21, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 23, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 26, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 45, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 46, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 49, 1–4, «Համբաւաբեր», թերթ: Թիֆլիս, 1916 թ., Հվ. հմր 50, 1–4:

⁷⁹ Կ. ՍԱՍՈՒՆԻ, Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 295, 298, 551:

⁸⁰ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 442, թթ. 10 շրջ. - 12: Մի խումբ ականատեսների վկայությունները Մուշի գավառի Բուլանըխի գավառակի Կոփ գյուղի կոտորածների մասին: Վավերագրի ամբողջական վերծանությունը տես Ա. ՎԻՐԱԲՅԱՆ, Գ. ԱՎԱԳՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ. 2, էջ 173–175:

⁸¹ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 446, թթ. 9 շրջ. - 11: Վերապրած Մեղրոն Կոնչոյանի վկայությունը Մուշի գավառի Բուլանըխի գավառակի Կոփ գյուղի կոտորածների մասին: Վավերագրի ամբողջական վերծանությունը տես Ա. ՎԻՐԱԲՅԱՆ, Գ. ԱՎԱԳՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ. 2, էջ 175–176:

Մուշեղ Խլղաթյանը, Մուշեղ Մարգարյանը, Խաչատուր Մովսիսյանը, Մուրադ Հակոբյանը, Միսակ Մխիթարյանը, Ավետիս Ղազարյանը⁸², Շամամը, Խլղաթը, Ավետիսը, Գասպարը, Կնյազը⁸³, Սարոն, Պետոն, Գրիգոր Խանոսյանը, Զորո Պոտոյանը, Տեր Գրիգոր քահանա Տեր-Ղազարյանը, Ավետիս Շահինյանը, Օհան Հակոբյանը, Շիրինը⁸⁴, Նազարեթ Ղալաչյանը, Տոնո Մանասյանը, Մելիք Հակոբյանը⁸⁵, Ղազար Մելքոնյանը⁸⁶, Հովհաննես Զաքարյանը (անչափահաս որբ), Մկրոն (Հովհաննես Զաքարյանի հորեղբայրը, կնոջ անունը Մարիամ), Ալթուն Հովհաննիսյանը (կամավորական), Հաբեթը (կամավորական) եւ Ոստանիկը⁸⁷:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խնդրագրերից քաղված տվյալները ուսումնասիրելով նկատում ենք, որ միայն Կոփից (Կոփ/Բուլանըք) Խրիմյանին է դիմել 46 ընտանիք (48 անձ, որոնցից երկուսը ամուսնիներ են): Եւս մեկ ընտանիքի մասին տեղեկություն ունենք քրիստոնեություն ընդունելու համար գրված գյուղական համայնքի վկայագրից⁸⁸: Այս 46 ընտանիքից հայտնի է միայն 11 ընտանիքի շնչերի քանակը, որը կազմում է 96 շունչ: Միջինը այս դեպ-

⁸² ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 432, թ. 5բ շրջ. – 10: Մի խումբ ականատեսների վկայությունները Մուշի գավառի Բուլանըխի գավառակի Կոփ գյուղի կոտորածների մասին: Վավերագրի ամբողջական վերծանությունը տես Ա. ՎԻՐԱԲՅԱՆ, Գ. ԱՎԱԳՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ. 2, էջ 176–179:

⁸³ Կնյազի մասին հիշատակված է երկու վավերագրում: Տես ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 430, թ. 6, տես նաեւ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 454, թթ. 40–41:

⁸⁴ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 430, թ. 6: Մի խումբ ականատեսների վկայությունները Մուշի գավառի Բուլանըխի գավառակի Կոփ գյուղի կոտորածների մասին: Վավերագրի ամբողջական վերծանությունը տես Ա. ՎԻՐԱԲՅԱՆ, Գ. ԱՎԱԳՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ. 2, էջ 179–180:

⁸⁵ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 452, թ. 5 շրջ. – 7 շրջ., վերապրած Նազարեթ Ղալաչյանի վկայությունը Մուշի գավառի Բուլանըխի գավառակի Կոփ գյուղի կոտորածների մասին: Վավերագրի ամբողջական վերծանությունը տես Ա. ՎԻՐԱԲՅԱՆ, Գ. ԱՎԱԳՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ. 2, էջ 180–182:

⁸⁶ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 454, թթ. 24 եւ շրջ., վերապրած Ղազար Մելքոնյանի վկայությունը Մուշի գավառի Բուլանըխի գավառակի Կոփ գյուղի կոտորածների մասին: Վավերագրի ամբողջական վերծանությունը տես Ա. ՎԻՐԱԲՅԱՆ, Գ. ԱՎԱԳՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ. 2, էջ 182–184:

⁸⁷ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 454, թթ. 40–41, վերապրած Հովհաննես Զաքարյանի վկայությունը Մուշի գավառի Բուլանըխի գավառակի Կոփ գյուղի կոտորածների մասին: Վավերագրի ամբողջական վերծանությունը տես Ա. ՎԻՐԱԲՅԱՆ, Գ. ԱՎԱԳՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ. 2, էջ 184–185:

⁸⁸ ՄՄ, Խրիմյան կաթողիկոս, թղթ. 101, վավ. 617:

քում կազմում է 8,7 շունչ: 46 ընտանիքի համար՝ 401 շունչ: Հետեւաբար, կարող ենք ասել՝ 401 մարդ դիմել կամ օգնություն է ստացել իրիմյան կաթողիկոսից՝ հանապազօրյա հացի, բնակավայրի ապահովման, վեճերի կարգավորման, բանտերից հարազատներին ազատելու միջնորդության, վերաբնակեցման եւ այլ խնդրանքների տեսքով:

Ըստ «Համբաւաբեր» թերթի հավելվածում զետեղված տվյալների՝ Կոփ գյուղից փրկված եւ ցարական Ռուսաստանի տարբեր որբանոցներում տեղավորված երեխաների ընդհանուր թիվը կազմել է 48: Նրանցից ամենափոքրը՝ 3 տարեկան է, իսկ ամենամեծը՝ 15 տարեկան: Երեխաների մեծ մասի տարիքը տատանվում է 9–11 տարեկանը: Ըստ ազգանունների կրկնությունների կարող ենք ասել, որ (թեպետեւ դա չենք կարող հաստատել) նույն ընտանիքից հնարավոր է, որ փրկվել են մի քանի երեխաներ: Այդ ընտանիքներն են՝ Կարապետյան, Զաքարյան եւ Հարությունյան ընտանիքները:

Իրիմյան կաթողիկոսի ֆոնդում գտնվել են նաեւ նամակներ, որոնցում նշված չեն գյուղանունները, այդ նամակներում նշված անձանց եւ նրանց շնչերի քանակը չենք ընդգրկել սույն հոդվածի մեջ, քանի որ չկար հստակություն: Սակայն նրանց ընտանիքների ավագներին եւ շնչերի քանակը ներկայացրել ենք, ինչպես նաեւ հատվածաբար բերել ենք նաեւ երկրորդ նամակի նմուշը:

Հայաստանի ազգային արխիվում պահպանված վավերագրերի ուսումնասիրությունը հնարավորություն է տվել վերականգնել Կոփ գյուղում ծնված, ցեղասպանությունը վերապրած առնվազն 44 հայի անուն: Նրանց գերակշիռ մասը՝ 39 անձ տղամարդիկ են: Արխիվները հիշատակում են նաեւ երեք անչափահաս որբերի եւ երկու կամավորականների մասին:

Այսպիսով, այս ուսումնասիրության շրջանակում տարբեր տեսակի սկզբնաղբյուրների համադրությամբ՝ Մատենադարանի իրիմյան կաթողիկոսի արխիվի վավերագրեր, Հայաստանի ազգային արխիվի նյութեր, «Համբաւաբեր» թերթի տվյալներ եւ այլն, մեզ հաջողվեց վերականգնել Կոփ գյուղի առնվազն հայոց 90 գերդաստանի ավագների անունները, եւ եւս 48 որբի մասին տեղեկություն: Այս բազմաշերտ պատկերը հնարավորություն է տալիս վերակազմելու Կոփի հայ բնակչության ժողովրդագրական կառուցվածքը եւ գյուղի նախաեղեռնյան նկարագրությունը: Մեզ

հաջողվեց պարզել նաեւ, որ Խրիմյան կաթողիկոսից օգնութեան համար դիմել է առնվազն 401 անձ՝ միայն Կոփ գյուղից:

Աղբյուրների համադրման արդյունքում ստացված ամբողջական պատկերը կարեւոր ներդրում է ոչ միայն Կոփի, այլեւ ամբողջ Բուլանք գավառի հայութեան պատմութեան վերականգնման գործում:

Յուրաքանչյուրի հոգվածի վերջում մենք պարտադիր գրում ենք հետեւյալ նախադասութիւնը. մեր ներկայացրած ցուցակը չի առաջարկում նոր մարդահամարի տվյալ: Այս հոգվածով մենք միայն գրավոր աղբյուրներից քաղել ենք այն անձանց ցուցակը, որոնք ծնվել են Կոփում նախքան 1915 թվականի Հայոց ցեղասպանութիւնը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Համիդյան կոտորածներ, հայ գաղթականություն, աղերսագիր, խնդրագիր, ձեռագիր նամակներ:

РЕЗЮМЕ

Настоящее исследование основано на сопоставлении многослойных источников: рукописных прошений из архива Католикоса всех армян Мкртича А. Хримяна (1892–1907), хранящегося в Матенадаране; документов Национального архива Армении; материалов, опубликованных в приложении тбилисской газеты «Хамбавабер»; а также армяноязычных, русскоязычных и османоязычных печатных первоисточников, сведений из справочников и научных публикаций. Обширный архив Хримяна Айрика, включающий около 8000 единиц рукописных материалов, предоставляет исключительную возможность реконструировать социально-демографическую картину армянского населения гавара Буланых, в частности – деревни Коп (Буланых).

Изучение прошений показывает, что только из деревни Коп к Хримяну Айрику обратилось 46 семей, представленных в общей сложности 48 заявителями, среди которых двое являются супругами. Дополнительные сведения об одной семье содержатся в деревенском свидетельстве, выданном по случаю принятия христианства. Лишь по 11 из этих 46 семей известна численность их чле-

нов – всего 96 человек, что в среднем составляет 8,7 душ на семью. Исходя из средних показателей, можно заключить, что из Копы к Католикосу обратилось не менее 401 человека с просьбами о материальной помощи, обеспечении средствами к существованию, содействию в переселении, урегулировании судебных споров, освобождении родственников из тюрем и других ходатайствах.

Согласно данным, помещённым в приложении газеты «Хамбавабер», установлены имена и фамилии 48 детей из Копы, спасшихся от геноцида и размещённых в различных приютах. Самому младшему из них было 3 года, старшему – 15 лет.

Документы Национального архива Армении позволили восстановить имена и фамилии как минимум 44 уроженцев деревни Коп, переживших Геноцид, из которых 39 были мужчинами. Эти же источники упоминают трёх несовершеннолетних сирот и двух добровольцев.

Таким образом, сопоставление различных типов источников позволило восстановить имена старших представителей как минимум 90 армянских семей деревни Коп, а также сведения о 48 сиротах. Полученная многоплановая картина даёт возможность реконструировать демографическую структуру и социальную жизнь деревни, а также зафиксировать «голоса» тех людей, которые стали жертвами Геноцида 1915 года.

В заключение следует подчеркнуть, что составленный нами список не является данными нового переписи населения. В статье представлены лишь имена тех лиц, которые упоминаются в письменных источниках и родились в деревне Коп до начала Геноцида армян 1915 года.

SUMMARY

This study is based on a comparison of multiple sources: handwritten petitions from the archive of Catholicos of All Armenians Mkrtych Khrimian (1892–1907), stored in the Matenadaran; documents from the National Archives of Armenia; materials published in the appendix to the Tbilisi-based newspaper “Hambavaber”, as well as Armenian, Russian, and Ottoman-Turkish primary sources, information from reference books, and scientific publications. The extensive archive of Khrimian Hayrik, comprising about 8,000 items of manuscript material, provides an exceptional

opportunity to reconstruct the socio-demographic picture of the Armenian population of the Bulanik district, in particular the village of Kop (Kop/Bulanik).

A study of the petitions shows that 46 families from the village of Kop alone appealed to Khrimian Hayrik, represented by a total of 48 applicants, two of whom were spouses. Additional information about one family is contained in a village certificate issued on the occasion of their conversion to Christianity. Only 11 of these 46 families are known to have a total of 96 members, which averages out to 8.7 people per family. Based on the average figures, it can be concluded that at least 401 people from Kop appealed to the Catholicos with requests for material assistance, provision of means of subsistence, help in resettlement, mediation in legal disputes, release of relatives from prison, and other petitions.

According to data published in the appendix to the newspaper “Hambavaber”, the names and surnames of 48 children from Kop who survived the genocide and were placed in various shelters have been established. The youngest of them was 3 years old, the oldest was 15.

Documents from the National Archives of Armenia have made it possible to restore the names and surnames of at least 44 natives of the village of Kop who survived the Genocide, 39 of whom were men. The same sources mention three underage orphans and two volunteers.

Thus, comparing various types of sources made it possible to reconstruct the names of the senior members of at least 90 Armenian families in the village of Kop, as well as information about 48 orphans. The multifaceted picture obtained makes it possible to present the pre-genocide demographic structure and social life of the village, as well as to record the “voices” of those people who later became victims of the 1915 Genocide.

In conclusion, it should be emphasized that the list we have compiled is not based on data from a new census. The article presents only the names of those individuals who are mentioned in written sources and were born in the village of Kop prior to the Armenian Genocide of 1915.

